



ՔԱՂՎԱԾՔ

**«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

թիվ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Մոսկվա

17-ը ապրիլի 2006թ.

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Խորհրդի 2006թ. մարտի 24-ի որոշման համաձայն /արձանագրություն թիվ 7/ 2006թ. ապրիլի 17-ին ժամը 11-00-ին Մոսկվա քաղաքի Գուբկինի փողոցի 14 շենքի թիվ 8 գրասենյակում տեղի ունեցավ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ժողովը, որին մասնակցում էին 24.03.06թ. դրությամբ կազմված ցուցակով խորհրդի կողմից հաստատված, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բաժնետերեր՝

- «HUDSOTRADE LTD» ՍՊԸ՝ Ի դեմս Ի. Խուրիի՝ 6007 ձայնի իրավունքով,
- Ս. Նասիբյան 1850 ձայնի իրավունքով,
- Մ. Խուրի 4474 ձայնի իրավունքով:

Հաշվի առնելով, որ տարեկան ընդհանուր ժողովն ապահովված է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով /ձայների գումարային քանակը 12331 հատ/ բաժնետերերի 100% տոկոս մասնակցությամբ, հետևաբար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը համարվեց իրավասու: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը նախագահում է Մ. Խուրին, իսկ ժողովի քարտուղարն է Ս. Նասիբյանը:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը հայտարարվեց բացված:

ՕՐԱԿԱՐԳ

6. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2005 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների և կրած վնասների բաշխման մասին:

6. ՀԱՐՅԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Ձեկուցեց ՝ Ս. Նասիբյանը:

Որոշեցին.

3. Հաստատել , որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի 2005թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ձևավորված և չբաշխված գուտ շահույթից 295 950,6 հազ. ՀՀ դրամը ուղղվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերին շահաբաժինների վճարմանը:

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՔԱՂՎԱԾՔԸ ԴԻՇՏ Է

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝

Ա. ՀԱՆԵՍՅԱՆ